

քահանան ինծի նայեցաւ ժպիտով մը և քիչ մը խունկի ծուխ տալով պատուին հեռացաւ:

Բարեկեցիկ ընտանիքի մը հօր զրպանն էի վերջերս, իրիկուն մը երէց որդին տասը տարեկան պատանի մը՝ ըսաւ իր հօր.

— Հայր, եթէ այս օրուան սովրած ոտանաւորս արտասանեմ ի՞նչ պիտի տաս: — Տասնոց մը զաւակս:

Տղան իր խոստումը կատարեց, ինչպէս և հայրը:

— Գանձանակիդ մէջ պիտի պահես այնպէս չէ՞:

— Այո՛, հայրիկ:

Եւ տղան զիս առաւ ու գանձանակին մէջ ձգեց, ուր ինծի նման ուրիշներ կային: Հոն օրէ օր կ'աւելնայինք:

Օր մը լսեցի հառաչանք մը, ճանչցայ, մեր փոլբիկ տէրն էր, և ան կը հեկեկար և մի քանի արցունքի կաթիլներ ալ մեր վրայ ինկան: Գրպանէն լրագիր մը հանեց և կարդաց. «Ատանայի որբիկը աւնօթի է և կը մրսի»: «Ահ, իմ հայրենաւորս է, որ իր հօրը և մօրը սպաննուիլը տեսած է, և հիմայ աւնօթի է և կը մրսի. ինչո՞ւ զուարճութեանս համար պահեմ այս դրամները, արդեօք ասոնցմով կարելի չէ՞ գէթ օր մը աղքատ որբիկ մը ապրեցնել» ... և շարունակեց լալ ու գանձանակը քանալ:

Փոքրիկը համրուրեց զմեզ և ըսաւ «Գնացէ՛ք հայ որբիկ մը ապրեցնելու» և մենք դէպ ի Ատանա ճամբայ ընկանք: Եւ միշտ կ'անցնէին մէջ կը մտածէի թէ ինչո՞ւ ստեղծուած եմ քանի որ մեծ արժեք մը չունիմ որ կարենամ ո՛ր և է մէկուն բարիք մ'ընել. «Տասը փարա». արհամարհական շեշտով մը կը կրկնէին միշտ զիս:

Ատանայի մէկ զիւղէն քիչ հեռու դալկացած պատանի մը զլուխը բարձին տուած կը քնանար. անօթութիւնը նիհարցուցեր էր զինքը. մէկը՝ որուն յանձնուած էի՝ արթնցուց պատանին և ըսաւ, «Ելի՛ր զաւակս, հայրենակիցներդ քեզի գթացեր են» և զիս անոր ափը դրաւ: Հայ որբիկ մ'էր

ան. որ գունատ դէմքով ժպտեցաւ, առաւ զիս, ուրախութենէն արտասուեց, համբուրեց, աղօթեց իր բարերարին համար և զիս տուաւ ուրիշի մը, որ փոխադարձ իրեն քանի մը պատառ հաց տուաւ:

Եւ հայ որբիկը ազատեցաւ մահուան ճիրանէն:

Եւ ես երբ զգացի թէ մահամի՛րձ որբիկը ապրեցուցի՝ մտածեցի «Ա՛ս է իմ կենեքիս ամենէն նշանաւոր դէպքը» և ես ուրախ էի որ ստեղծուած եմ:

Հ. Մ. Պոստոլեան

ԱՐՁԱԳԱՆԳ ՏԱՐՕՆԷՆ

ԳԵՐ. ՆԵՐՍԷՍ ԵՊ. ԺՆՏՈՅԵԱՆԻ ՄԱՀՈՒԱՆ

Ա. Ամենպատիւ Գեր. Տէր Տիգնատիոս Արքեպս. և Ընդհ. Արքայ. Գեղապատիւ Հարց Մեր իշխեալան Ուխտին, ի վնեւտ.

Վշտալի սրտիւք և դառն հառաչանքներով կու գամ Ձեր պատուական սրտեւրուն տեղեկացնել այնպիսի անակնկալ լուր մը՝ այնպիսի զոյժ մը որուն նմանը չէ պատահած մեզ համար, Տարօնոյ երկրի ժողովրդեան համար:

Հազար իննհարիւր ինն թուականին Յուլիսի 28ին մթութեան սև վարագոյր մը ծածկեց Մշոյ լեռներ, ձորեր, եկեղեցիք, դպրոցք և Եպիսկոպոսարանք, ու անագորոյն մահը այդ վարագոյրին ներքեւէն երկարցնելով իւր զազանաբարոյ և յափշտակիչ ճիրանները՝ խլեց և տարաւ մեզի՛ք՝ մեր պատուական և ուսումնաս. փիւռ Հովուապետը՝ մեր բազմեմախտ և յոգնահանձնար Հայրապետը՝ զԱրհի Ճնտույիան Հայր մեր Ներսէս Եպիսկոպոսը:

Ազգը կորսնցուց, Հայ-կաթողիկէ Հասարակութիւնը կորսնցուց իր մեծ վարդապետը՝ իր վաստակաւոր Հովուապետը, իր սիրելի Եպիսկոպոսը:

Արհի. Ճնտոյեան Հայր Ներսէս Եպիսկոպոսին ողբալի մահը և վախճանը խիստ մեծ ցաւ տուաւ Տարօնոյ Հայ ժողովրդը:

դեան, և ամէնքը կ'արտասուեն և կը սգան
այսպիսի անմխիթար կորստեան և ան-
դարմանելի մահուան առթիւ:

Երջանկայիշատակ Հայրապետին մերոյ
առ ազգս և առ Տարօնոյ Հայ ժողովուրդս
մատակարարած խնամքները և հայրական
բարիքները անթիւ ու անհամար են: Շի-
նց դարոցը, և հաստատեց նորակառոյց
Մխիթարեան վարժարաններ: Սրբազան
հարցն մերոց Սահակայ և Մեսրոպայ
նման՝ Հայաստանի Հայ ժողովրդեան մա-
տաղ սերնդեան սրտերուն մէջ ուսման և
գիտութեան սիրմբը ցանց:

Նկատելով Մշոյ և դաշտի Հայ ժողո-
վրդեան քաշած տառապանքը, հալա-
ծանքն և կոտորածը. շարունակ իւր սե-
նեկին մէջ քաշուած գրիչն ի ձեռին կու
լար և կ'ողբար ու աշխարհահոջակ Հայր
Ալեքանի նման՝ կը զրէր և կը նկարա-
զրէր անոնց վիշտն ու չարքարանքն, և
դիւցազն հոգւով արտասահման ցրիստո-
նեայ թագաւորաց կը տեղեկագրէր:

Երջանկայիշատակ Հայրապետին իմաս-
տուն մտքին և հանճարեղ հոգւոյն մէջ դեռ
շատ բարիքներ կային կատարելու: Ազգը,
Մշոյ հայ ժողովուրդը դեռ շատ բարիք-
ներ պիտի վայելէր իրմէն. այլ աւաղ որ
անգութ մահը այսպէս շուտ խեց և յա-
փըշտակեց զայն մեզմէ:

Փիւղիս մէջ Հոփփիսմեանց. անունով
վարժարան մը հաստատած էր աղջկանց
համար, որուն յառաջադիմութեան հա-
մար խիստ քանք կը թափէր՝ քնաց որր և
անտէր: Կարճ խօսքով, շնորհիւ իւր ա-
ռաքելական նախանձաւորութեան, փորձ-
առու խոհեմութեան և արդիւնաւէտ աշ-
խատութեան 18-20 տարիներու մէջ՝ ա-
մէն տեսակ զոհողութիւններ ի գործ դը-
նելով Տարօնոյ ժողովուրդը՝ օր ըստ օրէ
արագաքայլ բարոյական, նիւթական, կրօ-
նական և կրթական տեսակէտով զարգա-
ցուց, յառաջադիմեցուց. այլ աւաղ որ մեզ
համար քաշած վիշտը և նեղութիւնը կըր-
ծած և մաշեցուցած էին իր կենաց ար-
մատները. սպառեցաւ իւր կենաց իւղը և
մարեցաւ մեր լուսատու ջահն:

Տարօնոյ Մխիթարեան վարժարաննե-
րու վերատեսուչն՝ Կերպ. Հայր Անանիա
վ. Գոնտաքճեան և միւս վարդապետը՝
սուգ առած կու լան և մարգարտաշար ար-
ցունքներ կը թափեն իրենց մեծ վարդա-
պետին, շնորհալի Հովուապետին թանկ
կորստեան վրայ, զի որր և անտէր թու-
ղուց զիրենք:

Կու լան և դառնութեան արցունքներ
հեղեղի պէս կը հոսեցնեն իրենց աչքերէն,
Մխիթարեան վարժարաններու ուսուցիչը
և ուսանողը, զի մարեցաւ իրենց ճրագը,
իրենց կենաց լոյսն և արևը. ցամաքեցաւ
իրենց կենսատու աղբիւրը, թառամեցաւ
իրենց ծաղկանուտ բուրաստանը: Լացէք
և դուք Մխիթարեանք. զի կորուսիք և ի
հող դրիք պատուական անձնաւորութիւն
մը. թուա և հեռացաւ ի Ձէնջ Հ. Ալի-
շանի նման գիտուն և հանճարեղ Մխիթա-
րեան մը: Վերջապէս կու լանք և ծանրա-
թախիծ սգով կ'ողբանք և մենք ժողո-
վուրդ Տարօնոյ, Հայ-Կաթողիկէ Հասա-
րակութիւն Մշոյ, զի կորուսինք մեր բազ-
մերախտ Հովուապետը, մեր շնորհասփիւռ
և բազմավաստակ Հայրապետը, մեր քաջ
Հովիւր, մեր եկեղեցոյ գլուխն և Առաջ-
նորդը:

Կը մաղթենք յերկնից որ Ամենակա-
րօղն Աստուած՝ բազմերախտ և յոգնա-
հանճար Հովուապետին մերոյ, Արհ. Ծըն-
տոյեան վախճանեալ Հայր Ներսէս Եպիս-
կոպոսին զհանգիստն յաւիտեանական պար-
գեկելով՝ Հոգւոյն սրբոյ զօրութեամբ, Զեզ՝
ամբողջ միաբանութեան՝ ուխտին Մխի-
թարայ՝ վշտացեալ սրտերու մխիթարու-
թիւն և համբերութիւն տայ: Սփոփէ և
փարատէ ի Ձէնջ զսուգ և զտրտութիւն,
և օգնականութեամբ աղօթից Զերոց՝ ի
մէնջ:

Կ'աղօթենք և կը խնդրենք Աստուծ-
մէ որ բարեխօսութեամբ երջանկայիշա-
տակ Հայրապետին մերոյ և օժանդակու-
թեամբ Զեր սուրբ աղօթից՝ տայ, պարգեւէ
մեզ արժանի և գիտուն Եպիսկոպոս մը՝
որպէս զի Մշոյ Առաքելական եպիսկոպո-
սական աթոռը թափօւր չմնայ, և Հայ-

կաթողիկէ ժողովուրդը՝ որք, անտէր և առանց հովիւի չմնայ:

Մեծ յոյս ունինք որ դուք յանուն պայծառութեան սուրբ եկեղեցւոյ և Արհ. Ժնտոյեան Հայր Ներսէսի ի Տարօն վախճանելոյն յիշատակին համար՝ պիտի բարեհաճիր ևս առաւել հաստատել և առաջ տանիլ Միաթարեան վարժարաններն Մշոյ մէջ, վասն յառաջադիմութեան Հայ ազգիս և ի պայծառութիւն Հայ-կաթողիկէ Հասարակութեան:

Ի փառս և ի պարծանս երջանկայիշատակ Հօրն մերոյ մեծին Միաթարայ Աբրահօր:

Տարօնոյ Հայ ժողովուրդը չ'մոռնար Ձեր բարիքները, այլ ի վերայ սրտից ոսկեղէն տառերով գրած, անջնջելի և անմոռանալի պիտի պահեն Ձեր անմահ յիշատակները. և կ'ազօթեն յաւէտ որ տայ Աստուած և պարգեւէ խաղաղութիւն, յառաջադիմութիւն և յարատեւութիւն ամբողջ միաբանութեան ուխտիդ Միաթարայ. և մշտակաց և անսասան պահեսցէ մինչև ի կատարած աշխարհիս:

Գերապատիւ Տեարցդ սուրբ և երկնատուր օրհնութիւնը հայցելով, և սրբասնեալ աջոյն Ձերում խոնարհելով ի համբոյր՝ և յանձնելով զմեզ Ձեր սուրբ ազօթից, եմք և կը մնամք

Արհի. Գեր. Տեարցդ՝

Խ. Քոյր Մարիանէ Զաքարեան
վահան վրժպտ. Աբրահամեան
Ուսուցիչ Միթ. Վարժարանին Նորլէնի

Մոյ (Նորիլի)

ՀԱՅՐԵՆԻՔ Շաբաբարերք գրական, Հասարակական, Գաղաքական. — Բաժանորդագրութիւնն է Ամբրիկա. Տարեկան 2 տոլար. — Արտասահման 10 ֆր.

Հասցէն Rédaction Haïrenik
9 Knapp St.
Boston, Mass. (U. S. A.)



ԱՏԱՆԱՅԻ ՈՐԲԵԿԸ

— Անթիք եմ, կը մըսիմ...

Ողբացեալ Յ. Պապիկեանի մահը կրկին մեզի կը պատկերացնէ Ատանան՝ բոցերու և արիւններու մէջ: Ատանայի ջարդը խոր խոցեց հայ սրտերը, և ան՝ համեմատութեամբ քիչ զոհերով՝ կսկծեցուց զմեզ այնքան՝ որքան տասն և հինգ տարի անընդհատ ջարդուած հայութիւնը:

Կը յիշեմ Մարտի 31ի դէպքերը երբ Սեւանիկեան Ազատարար բանակը Պոլիս մտաւ իննամսեայ կապկպուած Ազատութիւնը փրկելու Համախի ճիրաններէն՝ վսեմ. Եւլէթ փաշան իգմիտի Հրամանատարէն զինուոր խնդրեց. և հայասէր Հրամանատարը ակնարկով մը իւր շուրջ